ԵԼԲ-ի ԱԿՆԱՐԿ

2024

Եվրոպական
Ներդրումային Բանկ

ԵՆԲ-ի մասին համառոտ

© Եվրոպական ներդրումային բանկ, 2024 թ.
98-100, boulevard Konrad Adenauer
L-2950 Luxembourg
+352 4379-1
info@eib.org
www.eib.org
twitter.com/eib
facebook.com/europeaninvestmentbank
youtube.com/eibtheeubank

Բոլոր իրավունքները պաշտպանված են:
Իրավունքների և լիցենզավորման վերաբերյալ բոլոր հարցերը պետք է ուղղել publications@eib.org էլ. փոստի հասցեով:

ԵՆԲ-ի գործունեության մասին լրացուցիչ տեղեկությունների համար խնդրում ենք ուսումնասիրել մեր կայքէջը՝ www.eib.org:
Նաև կարող եք կապվել info@eib.org էլ.փոստի միջոցով: Ստացե՛ք մեր նորությունների էլեկտրոնային տեղեկագիրը հետևյալ հղումով՝ www.eib.org/sign-up:

© Լուսանկարների աղբյուրներ՝ Shutterstock, Artem Hetman/UNDP Ukraine, CTP, RocSys, Darcy Levison/WHO, VARJO:

Հրատարակվել է Եվրոպական ներդրումային բանկի կողմից:
Տպագրված է FSC® թղթի վրա:

pdf: QH-02-23-327-HY-N ISBN 978-92-861-5706-6 doi: 10.2867/44

ԵՆԲ-Ի ՄԱՍԻՆ ՀԱՄԱՌՈՏ

Եվրոպական ներդրումային բանկը (ԵՆԲ) Եվրոպական միության բանկն է և կլիմայի փոփոխության դեմ պայքարի համար ֆինանսավորում տրամադրող աշխարհի ամենախոշոր կազմակերպություններից մեկը:

1958 թվականին հիմնադրվելուց ի վեր՝ ԵՆԲ-ն Եվրոպայի և աշխարհի տարբեր երկրներում իրականացվող ծրագրերում ավելի քան մեկ տրիլիոն եվրոյի ներդրում է կատարել: Կլիմայի փոփոխության դեմ պայքարը մեր կատարած աշխատանքի ընդամենը մի մասն է: Մեր գործունեությունը կենտրոնանում է հետևյալ գերակա ոլորտների վրա՝ շրջակա միջավայր, զարգացում, նորարարություն և հմտություններ, փոքր և միջին բիզնես (ՓՄՁ-ներ), ենթակառուցվածքներ և համախմբում:

Եվրոպական ներդրումային ֆոնդը (ԵՆՖ), որը ԵՆԲ Խմբի անդամ է, մասնագիտանում է փոքր և միջին ձեռնարկությունների աջակցության ոլորտում՝ ֆինանսավորելով նոր բիզնեսները, աճը, նորարարությունը, գիտական հետազոտությունները և փորձարկումները, զբաղվածությունը և տարածաշրջանային զարգացումը:

ԵՆԲ-ն աշխատում է այլ ԵՄ կառույցների հետ՝ խթանելու եվրոպական ինտեգրումը, զարգացումը Եվրոպական միությունում և աջակցելու ԵՄ քաղաքականության իրականացմանը: Ողջ Եվրոպայով իրականացվող մեր ներդրումներն ավելի են մերձեցնում ԵՄ երկրներին:

Մեր աշխատանքը տարածվում է Եվրոպայի սահմաններից դուրս շուրջ 160 երկրներում: ԵՆԲ Գլոբալի միջոցով, որը ստեղծվել է 2022 թվականին մեր զարգացման ֆինանսավորման ազդեցությունը մեծացնելու նպատակով, մենք օգնում ենք հաղթահարել գլոբալ մարտահրավերները և խթանել աճն ու հնարավորությունը ողջ աշխարհում:

ՄԵՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ 2023Թ.-ԻՆ

320 միլիարդ եվրո

ԵՆԲ Խմբից աջակցություն ստացող ներդրումներին

87,85 միլիարդ եվրո

ԵՆԲ Խմբի ֆինանսավորմանը

49 միլիարդ եվրո

կանաչ ֆինանսավորմանը

49.8 միլիարդ եվրո

հավաքվել է պարտատոմսերի շուկաներում

20 միլիարդ եվրո

փոքր և միջին բիզնեսներին

26,8 միլիարդ եվրո

կայուն էներգիային և բնական ռեսուրսներին

19,76 միլիարդ եվրո

նորարարությանը, թվային տեխնոլոգիաներին և գիտելիքներին

5,4 միլիոն

փոքր և միջին բիզնեսներից ստեղծված աշխատատեղեր

4,9 միլիոն

մարդ օգտվում է ավելի ապահով ջրից

2023 թվականին ԵՆԲ ֆինանսավորումը կազմել է 75,14 միլիարդ եվրո, այդ թվում 8,44 միլիարդ եվրո ԵՆԲ Գլոբալի կողմից

13,8 միլիոն

տնային տնտեսություն ապահովվել է հոսանքով

17,3 միլիոն

մարդ օգտվում է բարեկարգված ենթակառուցվածքներից

11,6 միլիոն

5G բաժանորդագրություններ

254 միլիոն

լրացուցիչ ուղևորություններ հանրային տրանսպորտով

1,5 միլիոն

մարդ պաշտպանվել է ջրհեղեղներից

21 700 մՎտ

վերականգնվող էլեկտրաէներգիայի արտադրության հզորություն

42 988 կմ

հոսանքագծեր են տեղադրվել կամ արդիացվել

13 միլիոն

էներգիայի խելացի չափիչներ են տեղադրվել

130,6 միլիոն

մարդ բուժսպասարկման ավելի լավ ծառայություններ է ստանում, այդ թվում պատվաստումները

2023 թվականի մայիսին Ուկրաինայի Ռեշետիլիվկա քաղաքում ԵՆԲ-ի կողմից աջակցվող լայնածավալ վերակառուցման աշխատանքներից հետո, բացվել է հաշմանդամություն ունեցող անձանց համար նախատեսված Kolos սպորտային և վերականգնողական համալիր:

ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՈՒԿՐԱԻՆԱՅԻՆ

Ռուսաստանի կողմից Ուկրաինա կատարած լայնածավալ ներխուժումը շարունակում է սարսափելի տառապանքներ պատճառել, ենթակառուցվածքների, քաղաքների և համայնքների զանգվածային ավերումներ առաջացնել, ինչպես նաև էապես խարխլել տնտեսությունը: ԵՆԲ-ն աջակցում է Ուկրաինայի իշխանություններին և ուկրաինացիներին: Մենք աջակցում ենք անկախ Ուկրաինային:

Որպես համակարգված ԵՄ-ի և այս ճգնաժամին ուղղված միջազգային արձագանքի մաս՝ Բանկն Ուկրաինայի համար իր ֆինանսական աջակցությունը տրամադրել է ԵՆԲ-ի Համերաշխության փաթեթի միջոցով՝ օգնելու կառավարությանը բավարարել իրացվելիության հրատապ կարիքները, ապահովելու, որ սնունդը, բժշկական պարագաները և վառելիքը հասանելի մնան ուկրաինացիների համար:

ԵՆԲ-ի կողմից 2023 թվականին տրամադրված աջակցությունը կենտրոնացած է ԵՄ-ն Ուկրաինայի համար հիմնադրամում, որն օգնություն է ապահովում բոլոր ոլորտներում, այդ թվում վենչուրային կապիտալի ներդրումներ մասնավոր ոլորտի համար:

ԵՄ անդամ պետություններն ավելի քան 400 միլիոն եվրո են հատկացրել ԵՆԲ-ի այս հիմնադրամին՝ աջակցելու այնպիսի ոլորտներին, ինչպիսիք են՝ առողջապահությունը, տրանսպորտը, կրթությունը, կիբերանվտանգությունը, ճգնաժամային վիճակում հայտնված սոցիալական ենթակառուցվածքները և մասնավոր ոլորտը:

Ուկրաինային տրամադրած ԵՆԲ-ի մյուս աջակցությունը ներառում է.

- ԵՄ երաշխիք՝ թույլ տալով Բանկին կատարել 100 միլիոն եվրոյի ֆինանսավորում արագ վերականգնման համար, օրինակ քաղաքային կամ էներգետիկ ենթակառուցվածքների վերանորոգումների համար,

- 100 միլիոն եվրոյի խորհրդատվական և տեխնիկական աջակցություն ԵՆԲ-ի սեփական ֆոնդերից՝ օգնելու Ուկրաինային պատրաստել վերականգնման նախագծեր:

CTP լոգիստիկ ընկերությունն իր հաստատությունների տանիքները վերածում է հսկայական արևային էներգիայի ֆերմաների՝ կրճատելով իր վարձակալների ծախսերը և արտանետումները: 2023թ.-ին ԵՆԲ-ն իր աջակցությունն էր տրամադրել CTP-ին 200 միլիոն եվրոյի վարկի միջոցով:

ԿԼԻՄԱ ԵՎ ԷՆԵՐԳԻԱ

Կլիմայի փոփոխությունը մեր սերնդի ամենամեծ գլոբալ մարտահրավերն է: Կլիմային առնչվող նպատակներին հասնելը կորոշի մեր երեխաների բարեկեցությունը: Կլիմայի և էներգիայի հետ կապված ԵՆԲ-ի նպատակները նոր չափանիշներ են սահմանում Եվրոպայում և նրա սահմաններից դուրս: Մենք այլևս չենք աջակցում հանածո վառելիքի նախագծերին և մեր ներդրումների 50%-ը կհատկացնենք կլիմայի փոփոխությունների դեմ պայքարին և կայունությանը:

ԵՆԲ-ի ներդրումներն աջակցում են անցումը «կանաչ» էներգիային: Որպես ԵՄ-ի կլիմայի փոփոխությունների դեմ պայքարի բանկ՝ ԵՆԲ-ն օգնում է համապատասխանել Փարիզի համաձայնագրի (կլիմայի փոփոխության դեմ պայքարի նպատակով կնքված միջազգային պայմանագիր) հանձնառություններին և Միացյալ ազգերի Կայուն զարգացման նպատակներին: Մինչև 2030 թվականը մենք 1 միլիարդ եվրոյի ներդրում ենք խոստացել կլիմայի փոփոխության դեմ պայքարի և շրջակա միջավայրի համար և հետևողական ենք այդ նպատակին հասնելու հարցում:

ԵՆԲ-ի գործունեությունն արագացնում է անցումը «կանաչ» էներգիային և տնտեսությունների ածխածնազերծումը: Մենք աջակցում ենք էներգիայի արդյունավետությունը բարձրացնող և վերականգնվող աղբյուրների օգտագործումը խթանող ծրագրերին, որոնք օգնում են կրճատել ածխածնի արտանետումները և ուժեղացնել մեր էներգետիկ անվտանգությունը:

ԵՆԲ-ի ներդրումները նաև մեղմում են խոցելի համայնքների վրա կլիմայի փոփոխության ազդեցությունները՝ պաշտպանելով կենսաբազմազանությունը և խթանելով կայուն ֆերմերությունը: Մենք պահպանում ենք բնական ռեսուրսները և անվտանգ ենք դարձնում շրջակա միջավայրն ապագա սերունդների համար:

Յուրաքանչյուր ծրագիր, որին աջակցում է ԵՆԲ-ն, ուղղված թե՛ նորարարությանը, թե՛ փոքր բիզնեսներին, թե՛ ենթակառուցվածքներին, պետք է համապատասխանեցվի կլիմայի վերաբերյալ մեր նպատակներին: Մենք աջակցում ենք այնպիսի ծրագրերին, որոնք պաշտպանում են շրջակա միջավայրը, որում ապրում են մեր երեխաները, նույնիսկ երբ մենք նորարարություն ենք կիրառում նրանց ապագան ավելի բարգավաճ դարձնելու նպատակով:

Հոլանդական Rocsys ընկերությունը 2023թ-ին 18 միլիոն եվրոյի վարկ է ստացել ԵՆԲ-ից, որպեսզի մշակի ռոբոտացված թև՝ սարքավորում, որը սենսորային տվիչների միջոցով լիցքավորման մալուխները միացնում է փոխադրամիջոցներին՝ մարդկանց գործողությունները նմանակելու համար:

ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Նորարարությունը մարդկանց առաջընթացի խթանիչ ուժն է: Նորարարությունը խթանում է բարեկեցությունը, մղում է բարգավաճության և առավելություններ ստեղծում հետագա սերունդների համար: Տնտեսական աճի ու զբաղվածության համար այն խիստ կարևոր դեր է խաղում:

ԵՆԲ Խումբը հանձնառու է վերացնելու ներդրումային պատնեշները և օգնելու Եվրոպական միությանը ստանձնել առաջատարի դիրք նորարարության հաջորդ ալիքի ընթացքում: Նորարարությունը պահպանում է Եվրոպայի մրցունակությունը և ստեղծում է բարձր վարձատրվող աշխատատեղեր: ԵՆԲ-ն աջակցում է նորարարության տարբեր փուլերում՝ սատարելով կենսամակարդակը բարելավող գաղափարներին:

Մենք աջակցում ենք ինչպես լայնածավալ գիտական հետազոտություններ և փորձարկումներ կատարող, այնպես էլ՝ մասնագիտացած փոքր ընկերություններին: Հեռահաղորդակցության, ավիացիայի, բժշկության, թվայնացման և այլ ոլորտներում մեր ներդրումները չափանիշ են, որոնք մասնավոր հատվածից լրացուցիչ ֆինանսավորում են ներգրավում այդ ծրագրերի համար:

ԵՆԲ վարկերի միջոցով համալսարանները կառուցում և ընդլայնում են իրենց հետազոտական լաբորատորիաները: Ստարտափ ընկերությունները մեծացնում են իրենց աշխատակազմը և նորացնում իրենց սարքավորումները: ԵՆԲ-ի աջակցությամբ նորագույն գաղափարները վերածվում են հաջողակ բիզնեսների:

2023թ.-ին ԵՆԲ-ի 1 միլիոն եվրոյի վարկն օգնեց վերանորոգել Ուկրաինայի Պոլտավայի մարզում գտնվող Վ.Ի. Վերնադսկու անվ. դպրոցը:

ՆԵՐԱԾՈՒՄ

ԵՆԲ-ն հզորացնում է փոքր բիզնեսներին ու երիտասարդներին և աջակցում է կին ձեռներեցներին՝ ապահովելով նրանց համար վարկերի և քոուչինգի հասանելիությունը: Ցածր եկամուտ ունեցող մարդկանց, ինքնազբաղվածների և միկրոձեռնարկությունների համար մենք հնարավոր ենք դարձնում ֆինանսավորում և բիզնես խորհրդատվություն ստանալը, որպեսզի նրանց ծրագրերը հաջողության հասնեն:

ԵՆԲ-ն ընդլայնել է տեղական միկրոֆինանսավորման հաստատությունների իր աջակցությունն այն շրջաններում, որտեղ մարդիկ հաճախ բանկերից օգտվելու որևէ հնարավորություն չունեն: Երբ մարդիկ ի վիճակի լինեն ստանալ վարկ, բիզնեսներն ավելի շատ աշխատակիցներ կընդունեն աշխատանքի, կանայք ավելի անկախ կդառնան, մարդկանց տեղաշարժը կկրճատվի, իսկ տնային տնտեսությունները կարող են հաղթահարել աղքատությունը:

Մենք օգնում ենք ապահովել, որ ոչ ոք անտեսված չմնա: Մենք անվտանգ, էներգաարդյունավետ տներ ենք տրամադրում ցածր եկամուտ ունեցող բնակչությանը: Մեր ներդրումները հնարավորություններ են ստեղծում գյուղական համայնքների, կանանց և երեխաների համար ողջ աշխարհով մեկ:

2023թ.-ի սեպտեմբերին ԵՆԲ-ն հաստատել է 750 միլիոն եվրոյի վարկ, որպեսզի վերականգնի մոտավորապես 22 կիլոմետր ձգվող մերձքաղաքային գնացքի գծերն Ալեքսանդրիայում՝ ավելացնելով նոր վագոններ, վերանորոգելով կայարանները, իսկ դիզելային շարժիչները վերափոխելով էլեկտրականուցվող համակարգերով:

ՀԱՆՁՆԱՌՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՓՈՐՁԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ՀԱՆՈՒՆ ԿԱՅՈՒՆ ԱՊԱԳԱՅԻ

ԵՆԲ-ն հաշվետու է ԵՄ քաղաքացիների առաջ: Այն աջակցում է Եվրոպական միության առաջնահերթությունները և նպատակները խթանող նախագծերին, այդ թվում կլիմայի փոփոխության դեմ պայքարը և շրջակա միջավայրի կայունությունը, նորարարությունը և հմտությունները, ենթակառուցվածքները, ՓՄՁ-ները, համախմբումը և զարգացումը:

Մեր անձնակազմն ընդգրկում է տնտեսագետներ, ինժեներներ, ֆինանսական վերլուծաբաններ և կլիմայի հարցերով մասնագետներ, ովքեր ամենօրյա սկզբունքով աշխատում են տեղական փորձագետների, հաստատությունների և կառավարությունների հետ ողջ աշխարհով մեկ:

ԵՆԲ-ն ֆինանսապես ինքնուրույն է և գումար է հայթայթում՝ միջազգային կապիտալի շուկաներում պարտատոմսեր թողարկելու միջոցով: Մեր վարկունակության գերազանց վարկանիշը թույլ է տալիս մեզ դրամական միջոցները հայթայթել լավ տոկոսադրույքներով, և այդ առավելությունները փոխանցվում են հաճախորդներին:

Սովորաբար մենք վարկ ենք տրամադրում ծրագրի արժեքի կեսից ոչ ավել: ԵՆԲ-ի ներգրավվածությունը պետք է ծառայի որպես կատալիզատոր՝ նպաստելով մասնավոր հատվածի առավել չափով ներգրավմանը և մեծացնելով ներդրումը որևէ ծրագրում:

Կապիտալի շուկաների գծով ԵՆԲ-ի փորձագետները ստեղծել և զարգացրել են «կանաչ» և կայուն պարտատոմսերի շուկաները: Մենք «կանաչ» պարտատոմսերի ամենամեծ վերազգային թողարկողն ենք, որով աջակցում ենք վերականգնվող աղբյուրներից էներգիայի ստացմանը, էներգաարդյունավետությանը, մաքուր ջրի ապահովմանը և սանիտարական պայմանների բարելավմանը:

2023թ.-ին ԵՆԲ-ն գործակցեց Եվրոպական հանձնաժողովի ու Բիլ և Մելինդա Գեյթս հիմնադրամի հետ՝ Աֆրիկայում ամեն տարի ապահովելու պոլիոմելիտի պատվաստումներ շուրջ 370 միլիոն երեխայի համար:

ԵՆԲ ԳԼՈԲԱԼ

Այսօրվա ամենամեծ մարտահրավերները և հնարավորությունները համընդհանուր բնույթի են, քանի որ մեր բոլոր տնտեսությունները փոխկապակցված են: Մի շրջանում կատարվող բարգավաճումը խթանում է այլ վայրերում իրականացվող բարգավաճմանը:

ԵՆԲ Գլոբալը՝ ԵՆԲ-ի զարգացման ճյուղը, ներգրավում է Բանկի բոլոր ռեսուրսները Եվրամիության սահմաններից դուրս իր գործունեությունն իրականացնելու համար: Այն նախատեսված է նպաստելու ուժեղ, կենտրոնացված գործակցությունները Եվրոպայի թիմի հետ, որը կազմված է անդամ պետություններից և ԵՄ հաստատություններից կառավարման և ֆինանսավորման համար:

Որպես Եվրոպայի թիմի մաս՝ մենք աջակցում ենք «Գլոբալ դարպաս» եվրոպական ռազմավարությանը, որով ողջ աշխարհում ներդրում է կատարվելու կայուն, բարձրորակ նախագծերում, որոնք օգտակար են թե՛ մարդկանց, թե՛ մոլորակի համար:

ԵՆԲ Գլոբալը հետևողական է, որպեսզի դյուրացնի 300 միլիարդ եվրոյի ներդրումների առնվազն մեկ երրորդը, որը Գլոբալ դարպասը մտադիր է մոբիլիզացնել մինչև 2027 թվականը: Սա կօգնի աջակցել այն նախագծերին, որոնք կենտրոնացած են թվայնացման վրա, կօգնի դիմակայել կլիմայի փոփոխության դեմ պայքարի, մաքուր էներգիայի, բուժսպասարկման, կրթության և տրանսպորտի մարտահրավերներին:

ԵՆԲ Գլոբալը մեզ ավելի է մերձեցնում տեղացիների, ընկերությունների և հաստատությունների հետ՝ փոխանցելով ԵՆԲ-ի գիտելիքները և տրամադրելով անկախ խորհրդատվություն: Այս խորհրդատվական ծառայությունները կարող են ուղեկցել Բանկի ֆինանսական պրոդուկտները, ինչպես նաև առաջարկվել ցանկացած ֆինանսավորումից անկախ:

ԵՆԲ Գլոբալը հավատարիմ է արդյունավետ համագործակցությանը մեր գործընկերների և շահառուների, զարգացման ֆինանսական հաստատությունների և քաղաքացիական հասարակության հետ: Սա մեզ թույլ է տալիս ավելիին հասնել մեր ֆինանսավորմամբ:

ԵՆԲ Խումբը բաղկացած է Եվրոպական ներդրումային բանկից (ԵՆԲ) և Եվրոպական ներդրումային ֆոնդից (ԵՆՖ):

ԵՆԲ-ն Եվրոպական միության բանկն է: Այն աշխարհի խոշորագույն բազմակողմ փոխառուներից և վարկատուներից մեկն է: Գտնվելով Լյուքսեմբուրգում՝ Բանկն ունի տեղական և տարածաշրջանային գրասենյակների ցանց Եվրոպայում և նրա սահմաններից դուրս:

ԵՆՖ-ն աջակցում է փոքր ձեռնարկություններին՝ նրանց համար ապահովելով ֆինանսավորման մատչելիությունը Եվրոպայում և Եվրոպայից դուրս գտնվող մի շարք երկրներում: ԵՆՖ-ն նախագծում և մշակում է վենչուրային և աճի կապիտալ, երաշխիքներ և միկրոֆինանսավորման գործիքներ՝ խթանելու նորարարությունը և զբաղվածությունը:

ԵՆԲ Գլոբալը ԵՆԲ-ի միջազգային զարգացման ճյուղն է: Այն հանձնառու է ֆինանսավորել կլիմայի դեմ պայքարը, նորարարությունը և կայունությունն ամբողջ աշխարհում:

01/2024 HY pdf: ISBN 978-92-861-5706-6